

**ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՅԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
«ԵԿԵՂԵՅԻ ԵՎ ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ» ՆԱԶՆԱԿԵՄԲԻ
ՆԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ
ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի գործադիր կոմիտեն Թուրքիայի անդամակցության հարցի շուրջ հոկտեմբերի 5-ին հանդես է եկել հայտարարությամբ, ուր, անդրադառնալով այս խնդրին, ասվում է, որ «Եվրոմիության հարաբերությունները Թուրքիայի հետ հույժ կարևոր են Եվրոմիության համար: Թուրքիայի հնարավոր անդամակցությունը Եվրոմիությանը կազդի ոչ միայն Միության և ամբողջ Եվրոպայի քաղաքական կառուցվածքի վրա, այլև Եվրոմիության բազում քաղաքացիների և տարածաշրջանում ապրող մարդկանց կենսապայմանների վրա»:

Նայտարարությունում նշվում է, որ սա միջկրոնական հարաբերություններին առնչվող հարց չէ և, շեշտադրելով այն պարագան, որ Եկեղեցիների Եվրոպական Կոնֆերանսը բանակցային գործընթացների մեջ ի խնդիր Իսլամի հետ խաղաղության և հաշտեցման, շարունակում է. «Չնայած մենք տեղյակ ենք Թուրքիայում վերջին տարիներին տեղի ունեցող արմատական փոփոխությունների մասին, դժբախտաբար մենք տակավին տեսնում ենք բազում խնդիրներ այս բնագավառում:

Եվրոմիությունը պետությունների և ազգերի մի համայնք է, ուր պարտադիր են փաստաթղթերով հռչակված արդարության և խաղաղության, համերաշխության և բազմազանության, հաշտության և հանդուրժողականության, խոսքի ազատության և փոխադարձ հարգանքի արժեքները, և Եվրոմիությունը ջանքեր է ի գործ դնում դրանք ամենօրյա կյանքի մասը դարձնելու համար: Ներկա փուլում Թուրքիայում այս արժեքների միևնույն արտահայտությունը մենք չենք տեսնում: Տակավին բանտերում բռնությունների, խոսքի ազատությունն ընդունելու խնդիրների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հանդեպ ճնշումների մասին հաղորդումներ են լինում: Պարտության ճշմարիտ հերազդությունը, մասնավորաբար դրա այն մասը, որ առնչվում է Թուրքիայի հարաբերություններին հարևան երկրների հետ և որն ընդգրկում է պարճառած ցավերի և վիրավորանքների ճանաչումը, նախապայման է հասարակության մեջ հիշողությունը բժշկելու և ճշմարիտ հաշտեցման: Այն դեռ ձեռք բերված չէ: Այս առումով հայ փոքրամասնության հետ հարաբերությունը հարուկ ուշադրության է արժանի: ... Այս առումով Եվրոպայի Եկեղեցիներն արտահայտում են իրենց խորը անհանգստությունը քրիստոնեական փոքրամասնությունների վերաբերյալ: Չնայած Թուրքիայի պարապետական իշխանությունների խոսքումներին, երկրում քրիստոնեական համայնքները տակավին շար խնդիրների են բախվում օրենսկան ճանաչման, սեփականարժեքական իրավունքների և կրթական ծրագրի զարգացման հարցերում: Մեր գնահատմամբ խնդիրները միայն օրենսդրական բնույթի չեն: Դրա-

նից այն կողմ գոյություն ունի բացահայտ և անարդար վերաբերմունք ավանդական կրոնների և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ»:

Նարկ է ավելացնել, որ այս խնդրի առնչությամբ մի շարք այլ հարցերի հետ ԵԵԿ գրասենյակից հաղորդում են, որ Թուրքիայի Եվրոմիությանն անդամակցության հարցի շուրջ ԵԵԿ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի նախագահ Ռուդիգեր Նոլը և Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդից Նոել Տրինորը հոկտեմբերի 11-ին հանդիպում են ունեցել Նիդեռլանդների փոխվարչապետի հետ: Թուրքիայի անդամակցության հարցի հետ կապված նշել են, որ «Թուրքիայի կարգավիճակը, որպես գերազանցապես մահմեդական երկիր, խոչընդոտ չէ անդամակցությանը: Մակայն հարցեր են ծագում. արդյո՞ք Թուրքիան իրականացնում է Կոպենհագենյան չափանիշները՝ կապված մարդու իրավունքների բարելավմանը և մասնավորապես կրոնական ազատության և ազգային փոքրամասնությունների խնդրին: Թուրքիայի հետ բանակցություններն սկսվելու են, բայց կարող է կասեցվել, եթե առաջընթաց չնկատվի վերոնշյալ չափանիշների հնարում:

Նշենք նաև, որ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսն իր փեսակերներն արտահայտում է Եվրոպական փաբեր արյաններում:

ՄԱՅՐ ԱԹՈՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ